ՀՀ ՍՓԻՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐ ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆԻ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԸ «ԲԱԶՄԱՎԷՊ» ՀԱՆԴԷՍԻ 175 ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

Յարգարժան պարոն Մարտիրոսեան,
Ձերդ գերազանցութիւն պարոն Դեսպան,
Գերաշնորհ սրբազան Հայրեր, հոգեշնորհ Հայրեր,
Յարգարժան գիտնականներ եւ ներկաներ,

Շնորհաւորում եմ բոլորիս Մխիթարեան միաբանութեան պաշտօնական ամսագրի՝ «Բազմավէպ» հայագիտական հանդէսի 175ամեայ յոբելեանի առթիւ. ամսագիր, որ հիմնուելով Սուրբ Ղազար կղզում՝ երկար տարիներ հարիւրաւոր հատորներով ներկայացել է հայ եւ եւրոպական հանրութեանը՝ անկախ դժուարին պայմաններից, պատերազմական ժամանակներից, քաղաքական վայրիվերումներից։

Այս օրերին եւս մէկ նշանակալի իրադարձութիւն է նշւում. ՀՀ գիտութիւնների ազգային ակադեմիայի 75ամեայ յոբելեանը, որի համար կրկին առիթ ունեմ շնորհաւորելու։ Այս երկու իրադարձութիւնների համընկնումը խորհրդանշական է, քանզի երկուսն էլ հայ ժողովրդի գիտութեան կաճառներ են՝ պատմական մեծագոյն դերակատարութեամբ եւ նուաճումներով՝ ազգային գիտական եւ հասարակական գործունէութեան մէջ։

Անգնահատելի է հայ պարբերականների դերն ու առաքելութիւնը մեր պատմութեան մէջ, հոգեւոր-մշակութային կեանքում, ազգային ինքնութեան պահպանման գործում։ Իսկ «Բազմավէպ»ը հայրենիքից հեռու, օտար մշակոյթների եւ քաղաքակրթութիւնների միջավայրում իրաւամբ վաստակեց հայ լրագրութեան Նահապետի տիտղոսը։

Դարեր շարունակ Մխիթարեան հայրերի առաքելութիւնը Մխիթար Սեբաստացու որդեգրած ուղու շարունակումն է, այն է՝

A.R.A.R.@

հայապահպանութիւնն ու հաւատքի զօրացումը, կրթութեան գործի կազմակերպումն ու հայրենասիրութեան սերմանումը, ազգային ու համամարդկային արժէքների քարոզումն ու տարածումը։

Մխիթարեան միաբանութիւնը գիտական եւ մշակութային գործունէութեան հետ մէկտեղ, ստանձնելով նաեւ հայ լրագրութեան զարգացումը խթանելու պատուաբեր առաքելութիւնը, 175 տարի առաջ դարձաւ հայ մամուլի ստեղծման հեղինակաւոր օջախը։ Պատմութեան եւ Մխիթարեան միաբանութեան առջեւ ծառացած խոշոր հոգեւոր-մշակութային խնդիրների թելադրանքով ստեղծուած «Բազմավէպ» ամսագիրն ունեցաւ իր անխափան երթը մինչեւ մեր ժամանակները, վստահ ենք՝ այս նախանձախընդրութեամբ այն կը յարատեւի դարեր։

Ինձ հետաքրքրեց «Բազմավէպ» անուանման բացատրութիւնը՝ «բազում բաներ վիպող, բազմապիսի բաներ պատմող»։ Անշուշտ, պարբերականը՝ հաւատարիմ իր անուանմանը, ստեղծման օրուանից դարձել է ժամանակի շունչը, իր էջերում անդրադարձ կատարելով հասարակութեան, նրա զարգացման ու ներքին օրինաչափութիւնների հետ կապուող հիմնահարցերին, քննել, ներկայացրել է ազգային-տնտեսական կացութաձեւի, գիտութեան տարբեր ճիւղերի բազմակնճիռ խնդիրները, պատմութիւն եւ վաւերագրութիւն ստեղծել։

Հայագիտութեան զարգացման գործում մեծագոյն աւանդ ունեցող «Բազմավէպ» պարբերականն ունեցել է աւելի քան չորս տասնեակ խմբագրապետ, ովքեր իրենց անմնացորդ նուիրել են ազգային վեհ գաղափարներին, հանրահռչակելով եւ աշխարհին ներկայացնելով հնագոյն հոգեւոր-մշակութային արժէքները, միաժամանակ մեծ ու անգնահատելի ծառայութիւններ մատուցել եւրոպական միտքն ու գաղափարները հայ մտաւորական միջավայր ներմուծելու համար։ Գաբրիէլ Այվազովսկի, Ղեւոնդ Ալիշան, Ներսէս Տէր-Ներսէսեան, Սիմոն Երեմեան... եւ մեծանուն ու անկապտելի համբաւ ունեցող հայ մամուլի եւ հայագիտութեան երախտաւոր բոլոր-բոլոր հայազգի վարդապետ-խմբագիրների մի համախումբ, ում գործունէութեան շնորհիւ է Մխիթարեան միաբանութիւնը ներկայացել ու շարունակում է ներկայանալ գիտական աշխարհում։ Անչափ ուրախ եմ եւ ինձ համար մեծ պատիւ է այսօր այս դահլիճում ողջունելու նրանցից Լեւոն Արքեպիսկոպոս Զէքիեանին, Հայր Յարութիւն վարդապետ Պզտիկեանին, Հայր Վահան վարդապետ Օհանեանին եւ Հայր Սերովբէ վարդապետ Զամուրլեանին։

digitised by

Գիտութեանն ու ապագային ծառայող այս մարդկանց շնորհիւ Մխիթարեան միաբանութեան խօսնակ պարբերականն անխոնջ ու անյողդողդ ծառայեց ազգին, Հայրենիքին, հայութեանը, իր հաստատուն խօսքն ասաց գիտութեանը՝ դառնալով ազգային արժէք, կոթող։ Պատահական չէ ամենեւին, որ հանդէսի 175-ամեակը մենք նշում ենք Մայր հայրենիքում։

Ձերդ գերազանցութիւն պարոն Դեսպան,

Խնդրում եմ փոխանցել Իտալիայի ժողովրդին եւ կառավարութեանը՝ հայասիրութեան, մեր ժողովրդին ցուցաբերած, քիչ է ասել՝ բարեացակամ վերաբերմունքի, առանձնապէս Իտալիայի սրտում Սուրբ Ղազարի հայ ազգային հոգեւոր-մշակութային ունեցուածքը կարեւորելու, պահպանելու եւ աշխարհին ներկայացնելու համար։

Մենք իւրովի մօտեցում ենք ցուցաբերում Մխիթարեան միաբանութեանը, համագործակցաբար բազմաթիւ ձեռնարկումներ կեանքի կոչելով, որոնցից էին Սուրբ Ղազար կղզում Մխիթարեան միաբանութեան հաստատման 300ամեակին նուիրուած միջոցառումները, «Բազմավէպ»ի 175ամեակին նուիրուած այսօրուայ գիտաժողովը։ Ուզում եմ առանձնակի նշել, որ գիտաժողովի կազմակերպումը հնարաւոր դարձաւ նաեւ ՀՀ ԳԱԱ, նրա ինստիտուտների, Մխիթարեան միաբանութեան հետ համատեղ աշխատանքի արդիւնքում, որի համար իմ շնորհակալութիւնն եմ յայտնում։

Սա պատմութիւն է, մեր ներկան, նաեւ՝ ապագան, իսկ թեւաւոր իմաստուն խօսքն ասում է՝ «Ով չի յիշում անցեալը, կաւելացնէի՝ նաեւ արժեւորում ու դաս քաղում նրանից, իրաւունք չունի ապրելու, ասել է թէ՝ ապագայ չունի»։

Սիրելի ներկաներ,

Մխիթարեան միաբանութեան գիտական եւ մշակութային գործունէութեան գիտական բարձր նշաձողն ու հայ լրագրութեան զարգացումը խթանելու պատուաբեր առաքելութեան արգասիքն է «Բազմավէպ»ը, որ հայ պարբերական մամուլի անդաստանում խոր ակօս է ձգել, գրելով փառաւոր պատմութիւն։

Ամփոփելով խօսքս, ասեմ, որ երկօրեայ գիտաժողովը, կարծում եմ գնահատանքի իւրօրինակ դրսեւորում է ցայսօր հրատարակուող հայերէն ամենաերկարակեաց, անընդմէջ հրատարա-

կուած «Բազմավէպ» հանդէսի համար, որի հարիւրաւոր հատորներ կազմող էջերում արծարծուել եւ վերլուծուել են ազգային կեանքի կարեւորագոյն ու հրատապ խնդիրներ, հրապարակուել բնագիտական, տնտեսագիտական, պատմագիտական, բանասիրական, աստուածաբանական, լեզուաբանական, մատենագիտական, գեղարուեստական, ուսումնական եւ Հայ եկեղեցու պատմութեանն առնչուող հազարաւոր արժէքաւոր նիւթեր, եւ այսօր էլ շարունակում է ներկայանալ հայագիտական հարուստ ու արժէքաւոր նիւթերով։

Սա լաւագոյններից է հայկական լրագրութեան եւ լրատուութեան միջոցներից, որի փորձն ու անցած ուղին ուսուցողական պէտք է լինի մեր օրերի լրագրութեան, լրատուութեան համար, համոզուած եմ, որ գիտաժողովին զեկուցումների միջոցով ամբողջութեամբ կը ներկայացուի այս հոյակերտ ամսագրի հարուստ գործունէութիւնը։

Մէկ անգամ եւս շնորհաւորում եմ եւ գիտաժողովին մաղթում արգասաբեր աշխատանք։

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ
ՀՀ ՍՓԻՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐ

digitised by